18/31 ՄԱՅԻՍ 1904

Ա. ՏԱՐԻ. — ԹԻՒ 48

ԵՐԱԶՆՈՒԹԻՒՆ

ԾԱԲԱԹԱԹԵՐԹ

Բաժանորդագին՝ 10 Քր. տարեկան

Հասցէ՝
Réd. du jour. „VERADZNOUTIOUN“.-Roustchouk
Ред. на в. „ВЕРАДЗНУТЮНЪ“. — Русе

ՄԷԿ ԷՋ Ռ. Ս.—Դ. Բ. Կ. ԾՐԱԳԻՐԸ.

Վերջերս Ռուսաստանի Սոց.—Դէմ. Բանւորական Կուսակցութեան Կենտր. Կոմիտէի հրատարակութեամբ առանձին գրքոյկով լոյս տեսաւ հայերէն լեզուով Կուսակցութեան պաշտօնական Ծրագիրը, որ ընդունւած է երկրորդ հերթական Համագումարում։ «Վերածնութեան» No 31-ի առաջնորդողում մենք արդէն մեկնաբանել ենք այդ Ծրագիրը, որ յայտնւում է Ծրագիր Ռուսաստանի ամբողջ սոցիալ-դէմոկրատիայի և այդ երկրի բոլոր ազգութիւնների պրոլէտարիատի տեսական, գործնական ու կանոնագրական դրութեան ու գործունէութեան մէկ ամփոփ, ամբողջական ու գիտականապէս մշակւած Ծրագիր։ Իբրև հայ սոցիալ-դէմոկրատ, պատկանող միևնոյն երկրին, մենք յայտնեցինք մեր կատարեալ հաւանութիւնն այդ Ծրագրի նկատմամբ և առաջադրեցինք, իբրև անհրաժեշտ պայման, ռուսահայ սոցիալ-դէմոկրատիայի միացումն այդ Կուսակցութեան հետ, իբրև որոշ ճիւղ նրա ընդհանուր կազմակերպութեան։ Վերոյիշեալ բրոշիւրի մեր լեզուով հրատարակման առիթով, մենք հարկ և անհրաժեշտ ենք համարում հենց այժմից «Վերածնութեան» էջերում, հայ պրոլէտարիատի աչքի առաջ դնել Ծրագրի տեսական մասն ամբողջովին, որ ըստ ինքեան ամփոփումն է սոցիալիստական թէորիայի և որոշող սրա տեղը ամբողջ Ռուսաստանի ներկայ իրականութեան մէջ։

Ահա այդ գեղեցիկ էջը։

«Փոխանակութեան զարգացումը ստեղծել է այնպիսի սերտ կապ քաղաքակիրթ աշխարհի բոլոր ժողովրդների մէջ, որ պրոլէտարիատի մեծ ազատագրական շարժումը պէտք է դառնար և վաղուց արդէն դարձել է՝ միջազգային։

«Ռուսաստանի սոցիալ-դէմոկրատիան՝ համարելով իրան պրոլէտարիատի համաշխարհային բանակի գնդերից մէկը, ձգտում է դէպի նոյն վերջնական նպատակը, դէպի որը ձգտում են բոլոր այլ երկրների սոցիալ-դէմոկրատները։

«Այդ վերջնական նպատակը որոշւում է ներկայ հասարակութեան բնաւորութեամբ և նրա զարգացման ընթացքով։

«Այդ տեսակ հասարակութեան գլխաւոր առանձնայատկութիւնը կազմում է ապրանքային արդիւնագործութիւնը՝ հիմնւած կապիտալիստական արդիւնագործական յարաբերութիւնների վրայ, ուր արդիւնագործութեան և ապրանքների շրջանառութեան միջոցների ամենակարևոր ու ընշանաւոր մասը պատկանում է մարդկանց մի փոքրաթիւ դասի, մինչդեռ ազգաբնակութեան ահագին մեծամասնութիւնը բաղկացած է պրոլէտարներից և կիսա-պրոլէտարներից, որոնք իրանց տնտեսական դրութեամբ ստիպւած են շարունակ կամ պարբերաբար ծախել իրանց բանւորական ոյժը, այսինքն մտնել կապիտալիստների մօտ աշխատավարձով և իրանց աշխատանքով ստեղծել եկամուտ հասարակութեան բարձր դասակարգերի համար։

«Կապիտալիստական արդիւնագործական յարաբերութիւնների տիրապետութեան շրջանում աւելի-աւելի լայնանում է այն չափով որ չափով տեխնիկայի մշտական կատարելագործումը՝ մեծացնելով խոշոր ձեռնարկութիւնների անտնտական նշանակութիւնը՝ տանում է դէպի արտաքսումն մանր անկախ արդիւնագործողների, դարձնելով սրանց մի մասը պրոլէտարներ, սահմանափակելով մընացածների դերը հասարակական-տեսական կեանքում և տեղ-տեղ դնելով նրանց աւելի կամ նւազ կատարեալ, աւելի կամ նւազ բացարձակ, աւելի կամ նւազ ծանր կախման մէջ կապիտալից։

«Տեխնիկայի նոյն առաջադիմութիւնը, բացի դրանից, ձեռնարկողներին հնարաւորութիւն է տալիս աւելի և աւելի մեծ չափով գործադրել կանանց և երեխաների աշխատանքը՝ արդիւնագործութեան և ապրանքների շրջանառութեան պրոցէսում։ Իսկ որովհետև միւս կողմից նատանում է դէպի ձեռնարկողների կարիքի յարաբերական նւազումը՝ գործադրելու բանւորական կենդանի աշխատանքը, ուստի բանւորական ոյժի պահանջն յետ է մնում՝ նրա առաջարկից, որի պատճառով էլ մեծանում է վարձու աշխատանքի կախումը կապիտալից և բարձրանում է նրա շահագործման մակերևոյթը։

«Իրերի այդ դրութիւնը բուրժուական երկիրներում և նրանց շարունակ աւելի և աւելի սուր կերպարանք ընդունող մրցումը համաշխարհային վաճառականոցում՝ աւելի և աւելի դժւարացնում են ապրանքների սպառումը (сбытъ), որոնց արդիւնագործութեան քանակը արագաբար աճում է։ Դերարտադրութիւնը, որը երևան է գալիս արդիւնաբերական քիչ թէ շատ սուր ճգնաժամերին, որոնց յաջորդում են արդիւնաբերական դադարի (застой) աւելի կամ նւազ տեւական շրջանները, ներկայանում է իբրև անխուսափելի հետևանք արդիւնագործական ոյժերի զարգացման՝ բուրժուական հասարակութեան մէջ։ Ճգնաժամերը և արդիւնաբերական դադարի շրջանները իրանց կարգին աւելի ևս սնանկացնում են մանր արդիւնագործողներին, աւելի մեծացնում են վարձու աշխատանքի կախումը կապիտալից և աւելի արագ կերպով տանում են դէպի բանւոր դասակարգի դրութեան յարաբերական, այլ և երբեմն կատարեալ վատթարացումն։

«Այդպիսով՝ տեխնիկայի կատարելագործումը, որ նշանակում է աշխատանքի արտադրողականութեան (производительность) մեծացումն ու հասարակական հարստութեան աճումն, պայմանաւորում է հասարակական անհաւասարութեան աճումը բուրժուական հասարակութեան մէջ, պայմանաւորում է ունևորների և չունևորների մէջ եղած տարաձութեան ընդլայնումը, ապրուստի անապահովութեան, աշխատազրկութեան և ամենն տեսակ չրկանքների մեծացումն աշխատաւոր մասսայի աւելի և աւելի յայն խաւերի համար։

«Բայց այն չափով, որ չափով բուրժուական հասարակութեան այդ առանձնայատուկ հակասութիւններն աճում ու զարգանում են, աճում է նոյնպէս աշխատաւորու շահագործւող մասսայի դժգոհութիւնն ընդդէմ գոյութիւն ունեցող կարգերի, աճում է պրոլէտարների թիւն ու համախմբումը (сплоченность) և նրանց կռիւը շահագործողների դէմ ընդունում է աւելի և աւելի սուր կերպարանք։ Միևնոյն ժամանակ տեխնիկայի կատարելագործումը, կենտրոնացնելով արդիւնագործութեան ու շրջանառութեան միջոցները և հասարակական դարձնելով աշխատանքի պրոցէսը կապիտալիստների ձեռնարկութիւններում, աւելի և աւելի արագաբար ստեղծում է նիւթական հնարաւորութիւն՝ ինտերնացիոնալ կապիտալիստական արդիւնագործական յարաբերութիւնները սոցիալիստականով, այսինքն ստեղծում է նիւթական հնարաւորութիւն սոցիալական յեղափոխութեան համար, որը յատնւում է միջազգային սոցիալ-դէմոկրատիայի — իբրև պրոլէտարիատի դասակարգային շարժման գիտակցական արտայայտչի — ամբողջ գործունէութեան կենդանական նպատակը։

«Փոխարինելով արդիւնագործութեան ու շրջանառութեան միջոցների վասնաւոր սեփականութիւնը հասարակականով և հաստատելով հասարակական-արդիւնագործական պրոցէսի նախաչափւած կազմակերպութիւն՝ հասարակութեան բոլոր անդամների բարօրութեան, ապահովման ու բազմակողմանի զարգացման համար, պրոլէտարիատի սոցիալական յեղափոխութիւնը կը վերացնէ հասարակութեան դասակարգային բաժանումը և դրանով կազատէ ամբողջ հարստահարւած մարդկութիւնը, որովհետև վերջ կը տայ հասարակութեան մի մասի կողմից միւսին շահագործելու ամեն տեսակներին։

«Այդ սոցիալական յեղափոխութեան անհրաժեշտ պայմանն է կազմում պրոլէտարիատի դիկտատուրութիւնը, այսինքն նաճումը՝ պրոլէտարիատի կողմից՝ այնպիսի քաղաքական իշխանութեան, որը նրան միջոց կը տայ ճնշել շահագործողների ամեն դիմադրութիւնը։

«Միջազգային Սոցիալ-Դեմոկրատիան, գնելով իրան նպատակ՝ ընդունակ դարձնել պրոլէտարիատին իրագործելու իր պատմական կոչումը, կազմակերպում է նրան իբրև ինքնուրոյն քաղաքական կուսակցութիւն՝ կանգնած հակառակ բոլոր բուրժուական կուսակցութիւններին, ղեկավարում է նրա դասակարգային կռիւի ամեն արտայայտութիւնները, մերկացնում է նրա առաջ շահագործողների շահերի անհաշտ հակադրութիւնը շահագործուողների շահերին և պարզում է նրա առաջիկայ սոցիալական յեղափոխութեան պատմականը-շանակութիւնը և անհրաժեշտ պայմանները։ Դրա հետ միասին՝ նա երևան է հանում մնայեալ ամբողջ աշխատաւոր ու շահագործուող մասսայի առաջ նրա դրութեան անյուսալիութիւնը՝ կապիտալիստական հասարակութեան մէջ՝ և սոցիալական յեղափոխութեան անհրաժեշտութիւնը՝ նրա սեփական ազատագրութեան համար կապիտալի ճնշումից։ Բանւոր դասակարգի կուսակցութիւնը, Սոցիալ-Դեմոկրատիան, հրաւիրում է իր շարքերն աշխատաւոր ու շահագործուող ազգաբնակութեան բոլոր խաւերին՝ որ չափով դրանք անցնում են պրոլէտարիատի հայեցակէտի վրայ։

«Իրանց ընդհանուր վերջնական նպատակին հասնելու ընթացքում, մի նպատակ, որ պայմանաւորուած է արդիւնագործութեան կապիտալիստական ձևի տիրապետութեամբ ամբողջ քաղաքակիրթ աշխարհում, զանազան երկիրների սոցիալ-դեմոկրատները ստիպւած են դնել իրանց առաջ ո՛չ միանման մօտակայ խնդիրներ (задачи), թէ՛ այն պատճառով, որ այդ ձևն ամենուրեք միևնոյն չափով չէ զարգացած, և թէ՛ այն պատճառով, որ նրա զարգացումը այլ և այլ երկիրներում կատարւում է տարբեր սոցիալական – քաղաքական պայմաններում։

«Ռուսաստանում, ուր կապիտալիզմը դարձել է արդէն արդիւնագործութեան տիրապետող ձևը, պահպանւել են մեր հին նախակապիտալիստական կարգի բազմաթիւ մնացորդներ, մի կարգի՛, որ հիմնւած է աշխատաւոր մասսաների ճորտական կախման վրայ կալւածատէրից, տէրութիւնից կամ տէրութեան պետից։ Ամենախիստ կերպով խանգարելով տնտեսական առաջադիմութիւնը՝ այդ մնացորդներն արգելք են պրոլէտարիատի դասակարգային կռիւի բազմակողմանի զարգացման, նպաստում են բազմամիլիոն գեղջկականութեան՝ պետութեան ունևոր դասակարգերի կողմից՝ շահագործւելուամենաբարբարոս ձևերի պահպանման ու զօրացման, և ամբողջ ժողովրդին պահում են խաւարի և իրաւազրկութեան մէջ։

«Անցեալի այդ բոլոր մնացորդներից ամենանշանաւորը և այդ բարբարոսութեան ամենազօրեղ պատւարը ներկայանում է ցարերի միապետութիւնը։ Իր բընութեան իսկ համաձայն՝ նա թշնամի է ամեն հասարակական շարժումներին և անկարող է չը լինել ամենաոխերիմ հակառակորդը պրոլէտարիատի բոլոր ազատարար ձգտումների։

«Այդ պատճառով Ռուսաստանի Սոցիալ – Դեմոկրատական Բանւորական Կուսակցութիւնն իբր իր մօտակայ քաղաքական նպատակ՝ դնում է ցարերի միապետութեան տապալումը և նրա փոխարինումը դեմոկրատական հանրապետութեամբ...»

ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆՆԵՐԸ ԿՈՎԿԱՍՈՒՄ

Ш.

Դաշնակցական ծրագրի հուրիւնը

(Շարունակութիւն).

Մարդ նկատում է, թէ ինչպէս մեր ծրագիրը կազմողները ամեն ջանք գործ են դրել թափելու իրենց «տրամաբանական» կարողութիւնը, որպէսզի կարողանան սոփեստական նիթերից չինել մի „ոսկեայ կամուրջ“ որով հնար ունենան մի քանի էջ առաջ խնկարկւած „իւտոպիական վարդապետութիւնից“, միամիտների միտքը պղտորելով, անցնել իրենց իսկական „դաւանութեան“՝ իրական այժմեականութեան։ Իսկ եթէ «գիտնական» հեղինակները հետեւողական լինէին, համոզւած լինէին վերը յիշած իրենց մարգարէութեան մէջ, այլ ոչ թէ սոփեստական այքակապութեան եւ ծրագրի «կենսականութեան» համար լինէին ճնշած իրենց մտածողութեան իսկական եղանակը, պիտի չմոռանային, որ կայ գիտական «վարդապետութիւն» էլ, որը աշխատանքի յաղթութիւնը հիմնում է ո՛չ թէ „հաստատ հանգամանքների“, այլ «իրական ոյժի» վրայ, իհարկէ ոչ այն առեղծւածային իմաստով, ինչպէս ծրագիրն է գործածում։ Սակայն «ընկերական գիտութեան դրական օրէնքներու» վրայ հիմնւած ծրագիրը կա՛մ գիտակցական մոռացութեան է տւել «ընկերական գիտութեան» այդ գիտական ուղղութիւնը, քանի որ «ատիկա իր գործին չի գար», կա՛մ էլանգիտօրէն դրան էլ է խոթել «իւտոպիական վարդապետութիւն» *) հաւաքական արտայայտութեան մէջ։

*) Այդ արտայայտութիւնը գործածւած է ըստ երեւոյթին սոցիալիզմի փոխարէն։ Ամբողջ ծրագրի մէջ մի անգամ իսկ չէ յիշւած սոցիալիզմ բառը. եւ շատ պարզ պատճառով։ Չէ՞ որ ծրագրի ամենագլխաւոր սկզբունքն է «կենսականութիւնը». նախ՝ որպէսզի կուսակցութեան դռները բաց լինին այն մարդկանց համար. որոնք սոսկալով փախչում էին Հնչակեան «հեռաւոր նպատակի» բազմագլխեան հրեշից։ Միւս կողմից էլ՝ որպէսզի „սոցիալիզմ“ լոկ անունով ոգեւորւող

Խիստ տարօրինակ կարող է երեւալ. թէ ինչու ապա Դաշնակցական ծրագիրը քաղաքական յեղափոխութեան իւր ձգտման համար դիմել է սոցիալական անհաւասարութեան գաղափարին եւ դրա վերացման պահանջի ու աշխատանքի յաղթութեան փառաբանութեան եւ յետոյ կրկին երես դարձրել դրանցից, յայտարարելով դրանց անժամանակակից ձգտում, „իւտոպիա“. — եթէ մի հանդամանքի վրայ ուշադրութիւն չդարձնենք։ Բանն այն է, որ այդ ծրագրից առաջ գոյութիւն ունէր Հնչակեան ծրագիրը իւր «հեռաւոր նպատակով»՝ սոցիալիզմով։ Այդ «հեռաւոր նպատակը» դուր չի եկել Դաշնակցական ծրագրի հեղինակներին, որովհետեւ «հայերի“ անմիջական պահանջների համար դա «կենսական» չէ, ուրեմն պէտք է ձեռք վերցնել դրանից։ Բայց միւս կողմից էլ դաշ՝ժամանակակից յեղափոխութիւնների ծուծն է, ուրեմն, որպէսզի ոչ Մարկոսը վիրաւորւի եւ ոչ էլ Կիրակոսը, պէտք է շողոքորթել նրա «քաղցր երազները», ցոյց տալ, որ ծրագիրը ոչ թէ միայն հակառակ չէ դրան, այլ՝ եթէ կուզէք՝ նոյնիսկ «ընդունում» է (ի՞նչ վնաս, խօսքերը են էլի, թող հրապարակ նետւեն), միայն թէ այժմ դնելու է բարձի տակ։ Այդ պատճառով էլ ծրագիր կազմողներն ընկել են այդ սոսկալի հակասութիւնների եւ սոփեստութիւնների մէջ։ Գոյութիւն չունենար, ասում ենք, այդ ծրագրից առաջ Հնչակեան ծրագիրը իւր „հեռաւոր նպատակով“, ամենայն հաւանականութեամբ առաջինը չէր ընկնի այնպիսի խորդուբորդութիւնների մէջ, այլ կը սկսէր իւր իսկական «դաւանութեամբ»՝ կապիտալի ազատութեան ազգային իդեալով։ Մարդ պարզօրէն նկատում է, որ Դրօշակեան ծրագիրը՝ սարով ու ձորով ընկած՝ սկսել է այն «հեռաւոր նպատակի» քննադատութեամբ։ Սակայն դրանով նա կողմնակի կերպով (գիտակցօրէն կամ անգիտակցաբար) բնորոշել է եւ իւր դիրքը դէպի սոցիալիզմը եւ աւելի ըէլիէֆ կերպով ներկայացրել իւր իսկական „դաւանութիւնը“։ „Մեր ձգտումն է եւ այլն“, «մեր նպատակն է եւ այլն». այդ պարբերութիւնների

„Երիտասարդ ինտէլիգէնտի» մտքում մթութեան մէջ պահէ իւր դիրքը դէպի հասարակական այդ ուսմունքը։ Միմիայն վերջին էջումն է յիշւում, որ թոյլ է տրւում հրատարակել նաեւ ... „գիտական-ընկերվարական» գրւածքներ։ Այդ «թոյլտուութիւնը» բղխում է կրկին «կենսականութեան» եւ խառնաչփոթութեան սկզբունքից։

Իդէպ՝ հրատարակութիւնների մասին, որովհետեւ դրանք նոյնպէս կարող են մոլորեցնել շատերին։ Ինչպէս որ ծրագիրն է խառնաչփոթութիւնների մի կոյտ այնպէս էլ՝ կուսակցութեան հրատարակութիւնները. կարդացէք իրար ետեւից «Ապստամբական ոգի», «Երիտասարդներին» (Կրապոտկին) եւ «Դիտական սոցիալիզմ» (Էնգելս)! որպիսի բազմերանգութիւն! կասկած չկայ, որ Էնգելսի գրքոյկը Դաշնակցութեան հրատարակութիւնների մէջ պիտի մնայ իբր մի գրական կուրիոզ. միայն թէ այդպիսի գրքոյկներ թարգմանելով կամ «բուրժուազական կարգերի“ քննադատութեամբ ոգեւորւելով, այդ կուսակցութիւնը չէ կարող պարակել իւր իսկական դէմքը. չէ՞ որ «բուրժուական կարգերի սրբազործւած անիրաւութիւնների մասին ճառելն էլ է մոդա. բուրժուազիային «մտրակում» է նոյնիսկ... Մշակը՝ Դրօշակի դաւանակից լագէլը բեկնը...։

մէջ արտայայտել են ծրագրի հեղինակները իրենց բուրժուական-իդէօլոգիական «դաւանութիւնը“։ Նրանք ուզում են, որ ծրագիրը «կենսական» լինի, „երկրին ներկայ դրութեան“ վրայ հիմնւած. «երկրին ներկայ պայմաններին“ համապատասխանող. մի քայլ անգամ պէտք չէ առաջ դնել, որովհետեւ իւրաքանչիւր այդպիսի քայլ, հեռանալով անմիջական ներկայից, «իւտոպիական» է։ Բայց չէ՞ որ տակավին հայկական ներկայ շարժումն պատմականօրէն բուրժուական շարժում է. չէ՞ որ «մեր երկրի» պատմական այժմեան մոմէնտի պահանջը կապիտալի ազատ մրցումն է։ Եւ մինթէ՞ «ընկերական գիտութեան դրական օրէնքներու» վրայ հիմնւող պարոնները չգիտէին ու չգիտեն այդ...։ Թողնենք այս կամ այն եւ դրանց բացատրութիւնը, միայն բուրժուազիայի իդէօլոգիային եւ կապիտալի մարգարէներին յատուկ է բարձր գաղափարների շահագործումը։ Եւ ծրագիրը լայնացնում է՞ իւր հայեացքի անկիւնը եւ տեսողութեան հորիզոնի մէջ առնում «ամբողջ հայ ժողովուրդը»՝ բուրժուական ազգասիրութեան գաղափարը։

Ծրագրի „գիտական“ հեղինակները լսել են, որ սոցիալիզմը բաժանում է հասարակութիւնը ընդհանուր առմամբ երկու՝ իրենց շահերով եւ ձգտումներով՝ իրարից խիստ տարբերւող դասակարգի, առանց ծանրանալու նոյն այդ հասարակութիւնը կազմող ազգաբնակութեան տարրի վրայ. բայց այդ բաժանման էութիւնը չըմբռնելով, գողացել են նրանք դասակարգերի այդ բէգրիֆը եւ խոթել իրենց ծրագրի մէջ։ «Երկրին ժողովուրդին մէջ կորոշուէր երկու իրարմէ բաժանւած... դասակարգ, հիմնւած բոնի ֆիզիքական ուժի վրայ. մէկ կողմէն առանձնաշնորհեալ մինսիլման տարրը. միւս կողմէն բազմաթիւ քաղաքական իրաւունքներէ զրկւած քրիստոնեայ ժողովուրդը» (8)։ «Հայ քրիստոնեայ ժողովուրդի» բազմաչարչար կեանքի կուժ ու կօլան պէտք է իհարկէ կոտրել „առանձնաշնորհեալ մինսիլման տարրի“ գլխին. այդ տարրի շնորհիւ է, որ հայ «ժողովուրդը» չարքաշութեան է մատնւած. չլինէր նա՝ հայ „ժողովուրդը“ երկրի տիրայութեան պտուղները վայելելիս կլինէր...։ Այդ „անտիմիսլիմանական քաղաքականութեամբ“ մեր կղզի քրիստոնէաբնները դիմում են անկիրթ ժողովուրդի կրօնական զգացմունքների շահագործման, վառում են ռասայական անտագոնիզմը։ Դա դեռ քիչ է. որպէսզի շարժեն հայերի ազգային ինքնասիրութիւնը, ծրագրի հեղինակները կոկորդիլոսեան արտասուք են թափում՝ որ «թիւրքերը բնաջինջ ըրին մեր ազնուականութիւնը“, արտաքսեցին մեզ «զինուորական ծառայութենէն»... ա՛խ, ինչպիսի խոր ցաւ է...։ Ինչո՞ւ պետութիւնը թոյլ չէ տալիս իւր բռնակալ կառավարութեան նախարարական պօրտ-ֆէյլները ազատ մրցման հանւեն, որպէսզի „կուլտուրական (որ ծրագրի մէջ թարգմանւած է «մշակական») անհաւասարութեան» ասպարիզում տիրապետող հայ տարրի ընտրեալները կարողանան ձեռք ձգել աշխարհս երեսին այդ ամենաբարձր փառքը...։ Ինչո՞ւ հայը զրկւած է զօրապետի չքաղաքներ ձեռք բերելու իրաւունքից...։ Ինչո՞ւ զրկւած են կառավարելու դերից եւ մատնւած „միմիայն աշխատելու, արդիւնարերելու“ պարտականութեան...։

Այդ դիսի քօղարկւած „ազգասիրութիւն“ է քարոզում մեզ Դաշնակցական ծրագիրը. դա նրա ազգասիրական դաւանութիւնն է. որ պիտի արտայայտի ամենուրեք։

Ս. Կասեան

(Շարունակելի)

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

IX

ԳԻՒՂԵՐՈՒՄ

Դ.

Մեր անցեալ թղթակցութեան մէջ խօսելով գիւղական ցեցերի և նրանց տուած վնասների մասին, եզրակացրինք, որ ժողովրդին աւելի ևս թշուառացնող ու արդիւնաբերական քաղաքները քշող պատճառներից են և դրանք, այդ անգութ պարազիտները։

Գիւղացու նահապետական տունը քայքայող այդ հանգամանքից է նաև գեղջկական արհեստների այն դրութիւնը, որի մէջ այժմ գտնւում են դրանք։ Դարբնութիւնը, ջուլհակութիւնը, կօշկակարութիւնը, պայտագործութիւնը այսօր գիւղերում անհետանալու վրայ են համարեա և տեղ-տեղ մնացածներն էլ վերին աստիճանի հին, անմշակ, անկարգացած դրութեան մէջ են գտնւում։ Այդ դրութիւնը նրանց դէպի կործանում է տանում գիւղերում։

Երկրագործութեամբ միայն պարապող գիւղացին անկարող լինելով դրանից ստացած եկամուտներով իրեն բաւականակ պահանջներին, կարիքներին բաւարարութիւն տալ, դիմում է գիւղական արհեստներին՝ մասամբ իրեն սեփական պէտքերին համար, — իրեն անհրաժեշտ իրեր շինելու և կամ հները նորոգելու, — և գլխաւորապէս ուրիշի համար գործիքներ շինելով ու վաճառելով նոր եկամուտ ձեռք բերելու, եղածը մեծացնելու։ Բայց արհեստների դրութիւնը խիստ նահապետական լինելով նրա յոյսերը չարն են ընկնում, որովհետև կայ աւելի զօրեղ և վիթխարի արհեստանոց՝ գործարանը։

Արդարև ի՞նչ կարող է անել գեղջկական դարբինը, որը իւր շինուածքների արտադրութեան համար ոչ մէկ կանոնաւոր, քիչ թէ շատ կատարելագործուած գործիք չունէ, որոնցով կարողանայ արտադրել մաքուր, պինդ և մեծ քանակութեամբ իրեր՝ կարճ ժամանակի ընթացքում, քիչ և հանգիստ աշխատելով։ Նա տեսնում է, որ իւր պատրաստած կոպիտ պայտի կողքին բուսնում են քաղաքներից եկած «մալինիո», — ինչպէս ինքն է ասում, — պայտերը՝ գեղեցիկ, ամուր և մեծ քանակութեամբ, նոյնպէս և անհամեմատ էժան։ Փոքրիկ տնակում, փոքրիկ քուքսով ու զընգանով նա շատ բան, կամ բոլորովին, չէ կարողանում անել, նոր իրեր պատրաստել, մեծ չափով արտադրել՝ յետ մղելու համար գործարանական ապրանքները. ուստի և փոքրիկ արհեստանոցը չը փակելու համար նա բաւականանում է հին գիւղական խոփը, անիւի, սայլի, դռների երկաթեայ մասերը նորոգելով միայն։ Իսկ դրանից նա ամենաչնչին մէկ վարձատրութիւն է ստանում, որը հազիւ է «ծայրը ծայրին հասցնումա», ծախսերը ծածկում։ Եւ նա, այդպիսով ուրեմն, ստիպւած է լինում վերջնականապէս փակել իւր խղճուկ արհեստանոցը։

Իրականութիւնը ցոյց է տալիս, որ գիւղական ազգաբնակութեան աղքատ մասը միայն երկրագործութեամբ անկարող է տուն պահել. իսկ գիւղական արհեստները չարդ ու փշուր են լինում, ուր նա ուզում էր նոր եկամուտի աղբիւր գտնել։ Թշուառութիւնը, կարիքը նրան ստիպում է թողնել հայրենի տունը և գնալ Բագու, Թիֆլիս, Բաթում և նոյն իսկ հեռաւոր ռուսական քաղաքներ գործ ճարելու։ Այդ քայքայմանը, այդ հոսանքին մենք ականատես ենք։ Նա վաղուց է որ սկսած է և այժմ էլ սուր կերպարանք ընդունելու վրայ է։ Երէկւայ երկրագործը, գեղջկական դարբինը այսօր Բագումում, նոյնպէս և այլ քաղաքներում, հասարակ բանւոր է՝ մեծ գործարաններում ու նաւթահանքերում օրավարձով աշխատող։ Ահագին է այդպիսիների թիւը։

Շատ-շատերը գիւղերում գալիս դիմում էին մեզ հետևեալ խնդիրներով՝ «մեր արհեստը ընկնում է, մենք փակելու ենք արհեստանոցը, ուզում ենք գալ Բագու, արդեօք մեզ յարմար գործ չի՞ լինիա։ «Գիւղում գործ չը կայ, պարտք ունեմ, աղքատեմ, գալու եմ Բագու գործ որոնելուա — ասում է միւսը։ Եւ ընկում են թւել անուններ, թէ նրանք արդէն այնտեղ են, աշխատում են տուն պահելու համար։

Դարբինի վիճակին են ենթարկւում և միւս բոլոր արհեստները. նոյնիսկ գորգ և կապերտ գործողներն էլ զգում են, որ իվերջոյ իրենք էլ են դադարեցնելու արտադրութիւնը, որովհետև գործարանն ինքն է պատրաստում այժմ։

Բագու Ահրիման

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՍՏՐԱԽԱՆ 3 մայիսի, 1904 թ.

Մեծամտութիւնը ո՞ւմ տունը չէ քանդել, որ չքանդէ ներկայումս և ցարիզմի տունը։ Այդ ապարախտ կառավարութիւնը, տեսնելով իր մօտալուտ քայքայումը, փրկութեան միակ յոյսը դրել է մեծամտութեան վրայ։ Սրանով կամենում է ներկայ պատերազմի առիթով մանաւանդ ընկած վարկը բարձրացնել։ Դուշէ ընթերցողներն ասեն, թէ այդ բանի մասին շատ գրեցաւ, բայց կարծումենք, քանի որ այդ զէնքը զանազան խաբեբայութիւններով դեռ գործ է ածւում ժողովրդի միտքը քնեցնելու համար, մենք պարտաւոր ենք փաստերը և դէպքերը զուգադիպելով՝ տալ դրանց ճիշտ լուսաբանութիւնը. սրանով ցարի դիմակը կպատռւի. թող այդ կեղծ ու պատիր լուրերին հաւատ ընծայողները տեսնեն մեդալի միւս կողմը, այսպէս ասած, աստառը։

Ահա փաստերը։

Հեռագրական գործակալութիւնը ամեն օր տեղեկութիւններ է հաղորդում պատերազմի դաշտից, բայց բոլորն էլ կեղծ ու շինծու. իսկ այն մեծամտական և օրօր կարդացող եղանակը, որով խմբագրւում են այդ տեղեկութիւնները, մարդու ծիծաղն են միայն շարժում։ Սրա վրայ էլ լրագրութիւնը աւելացնում է աշխարհ սասանեցնող վերնագիրներ և լրացուցիչ բացատրութիւններ, որով ճգնում է մեծացնել կառավարութեան անշնչան քայլը. իսկ նսեմացնել թշնամու յաղթութիւնը։ Իսկ ո՞վքեր են այդ յօդուածի հեղինակները։ — Բոլոր կաշառւած չինովնիկները՝ փոքրից սկսած մինչև նախանգապետները՝ իհարկէ կեղծ անուան տակ։

Ասածներս ապացուցանելու համար վերցնենք ձեռքներիս տակ եղած հէնց այսօրուան թերթերը։

Կարդում ենք՝ «Եապոնական ականաւոր կորուստներ։ Պատռւում էք, թէ ի՛նչ սոսկալի տեղեկութիւն պէտք է լինի այդ վերնագրի տակ. և բանից դուրս է գալիս, որ կերը ծոցում եապոնացիները ական են հանել և մէկ ականաւոր անզգուշութիւնից թէ այլ պատճառից չրասոյզ է եղել։ Ենթադրենք, որ ճիշտ է։ Ի՞նչ մեծ բան. մի՞թէ պատերազմի ժամանակ եապոնացիք պէտք է կորուստներ չունենան։ Բայց ցարի կառավարութիւնը այդ անշնչան դէպքը տպում է խոշոր տառերով և շեշտում է այնպիսի եղանակով, որ կարծես ինքը մի քանի զրահակիրներ է

Ա. Յ. ԱՍՄԱՆ 1

ԶՈՒԼՈՒՄԸ

ԿԵՏԱՆՔՆ Է ԵՐԿՆՈՒՔՍ.

ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ՊՕԷՄԱ

Ազատութեան հայրը բռնութիւնն է,
Իսկ մայրը՝ անիրաւութիւնն.

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

Բեհրամ ամի — գիւղացի, 70 տարեկան.
Զմրուխտ. — նորա կինը. 60 »
Սալբի. — նրանց աղջիկը, 16 »
Միհաս — (նրանց որդիքը. որ բռնի կերպով ծա-
Ստեփան. —(ռայում են իշխանին. 25 եւ 23 տ.
Լեւոն. — Սալբիի նշանածը. 26 տարեկան
Մալիազ — գիւղի իշխանը. 40 »
Իշխանի զինւորներն ու ծառայողները.
Ամբոխ. — գիւղացի, գեղջկուհի եւ երիտասարդներ.
Գնչուներ.

Անցքը պատահում է 190՝ թ-ի ամառը է. . . գիւղում, ուր բռնանում է Մալիազ իշխանը, որի աւազակաբարոյ եւ ապօրինի ընթացքը բոլորովին զզուեցրել է ամբոխին։

ԼԱՒԵՐԴԱՆՔ.

Դաշտում գիւղացի հնձւոր տղայք ու աղջկերք հունձք անելով երգում են ոգեւորւած բայց տխուր ձայնով.

Տղայք.

Անցան գնացին երջանիկ օրերն
Եւ եկան հասան դառն ու սեւ օրերն.
Կորցրինք փառք. պատիւ. կորաւ ամէն բան
Ու դառանք ամենքս մի մի հատ լալկան.
Լալով. ողբալով օրերս ենք անցնում
Եւ մեզ այլեւս ո՛չ ոք չի խղճում. . .

Աղջկերք.

Բայց ա՛յ եղբայրներ. մինչեւ ե՞րբ մնանք
Այս սեւ վիճակում ու դառն ողբանք.
Մի թէ՞ չը հասաւ ժամը փրկութեան,
Խօսքի ու կամքի մեր ազատութեան.
Որ կարող լինենք իրարու. մարդ ապրել.
Ա՜հ. թէկուզ գոնէ իրարու մարդ մեռնել. . .

Բոլորը.

Բայց. չը վնասե՞նք. . . տանք իրար խրախոյս,
Մինչեւ կը ծագէ մեզ նոր արշալո՛յս. . .
(Յանկարծ. մի ձի. ոչխարում լսւում մուն ինչ)
Մի աղջիկ — (ընդհատելով լռութիւնն)
Լաւ միտքս եկաւ. նոր բան լսե՞լ էք
Բոլորը — Ի՞նչ է. նոր բան կա՞յ...(հետաքրքրութեամբ)
Աղջիկը — Բա՛. չէ՞ք իմացել. . .
Ասում են իրարու Մալխազ իշխանը
Ուզում է Սալբուն իր տունը տանել.
Իրարու աղախին. . .
Բոլորը — Այդ ո՞ր Սալբին է. . .
Աղջիկը — Ա՛յ Բէհրամ ամու աղջիկն է ի՛նչ է. . .
Բոլորը — Հա՛. . . Բէհրամ ամու աղջիկը՝ Սալբին. . .
Խե՛ղճ Բէհրամ ամի. . . Ինչա՛ւ անպատճառ
Դու պիտ տուժես մինչ. . . Անիրաւ իշխանն
Ի՞նչ է տալ քեզ. որ ձեռք չի վերցնում. . .
Աղջիկը — Բայց Բէհրամ ամին այս անգամ այլեւս
Կատաղել է եւ չի հնազանդւում
Իշխանի կամքին. . . «Չեմ տալ աղջիկս»
Թէկուզ սպանէք ինձ. ասում է նա. —
Էլ բաւական է ինչքան տուժեցի.
Որդիքս տարար. տանը ճրագը
Մարեցիր խպա՛. այժմ էլ ուզում ես
Իմ վերջին յոյսս խլել իմ ձեռքից. . .»
Բոլորը — Անիրաւութի՛ւն. խե՛ղճ Բէհրամ ամի։
Աղջիկը — «Զօռով կը տանեմ. ասում է իշխանն. —
Թա նա իր ոտով չի գայ մեր տունը».
Եւ ժամանակ է գրել մինչ էգուց.
Թէ Սալբին գնաց. հո՞ գնացել է.
Թէ չէ՞. իշխանը զօռով պիտ խլէ
Նորան իւր ծերուկ ծնողաց գրկից. . .
Բոլորը — (բորբոքւած) Լրբութիւն է այդ. . .
Աղջիկը — (խորհրդաւոր) Ասում են իբրեւ
Իշխանն ուզել է խեղճ Բէհրամ ամու
Աչքը շլացնել լաւ ընծաներով,
Բա՛յց Բէհրամ ամին մերժել է խպա՛ռ. . .
Բոլորը՝ — (Մատները կծելով. որպէս թէ մի յետին
գաղտնիք իմացած լինելով վերջին խօսքերից,
կատաղի գոչում են)
Հը՛մմ. . . լա՛ւ է արե՛լ. . . օ՜օ՛. . . այժմ արդէն
Զարին անցնում է այդ անիրաւը. . .
Մենք ենք մեղաւոր. մենք հասկանո՞ւմ էք.
Ինչ որ պատանցնց. տեսանք լուռ-մունջ.
Դէ՛. այժմ էլ նոս իւր ոտնձգութիւնն
Աւելի առաջ է ուզում տանել. . .
Թէ որ չառնի գորա առաջը.
Նա դեռ շատ բաներ պիտի պատանցէ։
Պէտք է չարիքի առաջը առնել. . .
(Վերջին խօսքերի վրայ ոմանք բռունդրներն եւ ոմանք մանգաղները վեր վերցնելով շարժում են սպառնալից կերպով)։

(Շարունակելի) Վարագոյրն իջնում է

խորտակել։ Այդ հեռագրից յետոյ կարդում է.թ քիչ ստորև. «Եապոնական երկրորդ զօրախումբը՝ թւով 70,000, Ցինամպոից դուրս է եկել 83 շոգենաւով ափերն իջնելու համար, և այդ նրան աջողուել է»։ Ահա դա չէ՞ որ մեծ քայլ է եապոնացիների կողմից։ Իսկ ցարի կառավարութիւնը այդ հեռագիրը տպում է մանր տառերով, վերնագիր էլ չէ դնում, ի հարկէ։ Բացատրութիւնը աւելորդ չէ՞ միթէ։ Երրորդ տեղեկութիւնը նոյնպէս մանր տառերով. «Եապոնացիները ծովային գործողութեան խարիսխը տեղափոխել են Լազարեւի պորտը, ծոցի մուտքը բռնել են ականներով»։ Դարձեալ մի քայլ եապոնացիների կողմից և այն էլ Վլադիվոստոկի նաւատորմիղի քթի տակ։ Բայց չէ՞ որ հասարակ ընթերցողը չէ կարող սազ ու բազ գալ այդ մութը հեռագիրներից. նա չգիտէ մինչև անգամ որտեղ է գտնւում պորտ Լազարեւը։ Աւելորդ է ասել, որ այդ լուրը տպւած է խճճւած՝ ընդարձակ հեռագրական տեղեկութիւնների մէջ և առանց վերնագրի։

Իսկ այն պարտութիւնն՞ը, որից յետոյ ստիպւած են եղել ռուսները յետ նահանջել։ Դրանց մասին գրում են թէ եապոնական զօրքը երեք անգամ մերնից աւել էր, թէ գլխաւոր հրամանատար Կուրոպատկինը լաւ համարեց այս ինչ տեղը զիջանել առանց կռիւ...և հազար մի այդ տեսակ կեղծ ու շինծու լուրեր, որից ի հարկէ իրերի դրութիւնը երբէք չէ փոխւում և չի էլ փոխւիլ։ Մի և նոյն ժամանակ ամեն քայլափոխում աշխատում են թող փչել, թէ ազգաբնակութեան մէջ հայրենասիրական աւիւնը օրէց օր աւելանում է.այս ինչ տեղից նուիրել են միլիոն ու կէս, այն ինչը հազարներ է տուել և թէ կառավարութիւնը փողի կարօտութիւն չունի, այլ փողի խիստ կարօտութեան մէջ է Եապոնիան։ Բայց հէնց այս օրերս այդպէս խօսող ցարը 300 միլիոնի փոխառութեան հրաման է արձակել։ Իսկ թէ ազգաբնակութեան մէջ ո՞ր չափով է զարգացած հայրենասիրական ոգին, բաւական է, որ բերենք այս փաստը։ Կոմիսսիոներ Զախարովը պատուէր է տուել զօրքի համար մօտ 10,000 բուբլու կոշիկներ։ Ապրանքը ուղարկւել է Իրկուտսկ. և ի՞նչ — առաջին անգամ հագնելուց հէնց կոշիկները պատռւել են և տակերը պոկ եկել։ Բանից դուրս է գալիս, որ այդ տխրահռչակ կոշիկների տակերը կպցրած են եղելասոսինձով, փոխանակ մեխերի։ Կոշիկները անպէտք համարելով՝ յետ է ուղարկում Վարշաւա։ Ցաւալի է այն, որ վաճառականները կոշիկները յետ չեն ընդունում, առարկելով թէ փչացրած են։

Այդ վերաբերումն էլ հայրենասիրութիւնից է բղխում, չէ՞։

Ահա մի օրինակ զօրքի աշխատութիւնից։ Պարտութիւններ կրող զօրքը և դրանց մեծերը յանկարծ մի ակնյայտնի տակտ ու աշխատութիւն են ցոյց տալիս, — միայն ի հարկէ ո՛չ այնտեղ և այն ժամանակ, երբ այդ հարկաւոր է։ Խայլար կայարանից 16 վերստ հեռաւորութեան վրայ երկաթուղին զօրք տեղափոխելիս իբրև թէ փորձանքից է ազատւում, շնորհիւ սահմանապահի մի զարմանալի աչալրջութեան։ Ճանապարհի վրայ դրած են լինում երկու պիրոկսելինի փամփուշտ, բայց... ի հարկէ, — շեշտում է լրագիրը, — դրած է եղել այնքան խամ ձեռքով, որ փամփուշտները պայթել են վագոնների վերջում և ոչ մի մարդ չէ վնասւել։ Գնացքը կանգնեցնում են, և աշխատաւորն հսկողներն իսկոյն նկատում են, որ 5 չինացի վագելիս են եղել։ Ինչ ասել կուզի, իսկոյն բռնում են և չարագործ չինացիներին կապում են ծամերից (այդ էլ շեշտում է իբրև զուշաղութիւն) և բերում են Խայլար։ Դրանց մօտ գտնում են գիծը փչացնելու գործիքներ։ Ճաշոցութիւն է, չէ՞։ Բայց թէ ի՞նչու այդ աշխատաւորն հսկողները չեն տեսել վտանգը ժամանակին. չէ՞ որ կարելի էր նկատել այն ժամանակ, երբ այդ հինգ մարդը մօտենալիս են եղել ական դնելու ժամանակ։ Գնդէ ծամերը խո՛ պէտք էր երեւէի՞ն։ Բայց այդ մասին լրագիրը խոհեմութեամբ լռութիւն է պահպանում։ Բայց ձեռնտու է միևնոյն ժամանակ թմբկահարել մի այդպիսի սուտ։ Հեռագիրները հաղորդում են, որ եապոնացիք Պորտ–Արտուրից Մուկդէն տանող գիծը փչացրել են և չորս կամուրջ խորտակել։ Դա մի այնպիսի հարւած էր, որ ցարը չէր կարող տանել։ Որպէսզի մի կերպ իրանց վնասը ծածկեն, հնարում են մի առասպելական սուտ, իբրեւ թէ մի զօշաղի աջողումէ մի գիշերում ճանապարհը ուղղել և հաղորդակցութիւնը Պորտ–Արտուրի հետ նորից վերսկսել։ Զարմանալի բան է մանում, ընթերցող։ Դուք էլ կասէք, որ խաչած հաւերն էլ՝ կթիթաղեն։ Ինչպէ՞ս կարելի է մի գիշերում չորս կամուրջ նորոգել... Բայց ինչ անես, մի մարդ որ գլուխը կորցրեց, նրանից շատ բան ըսպասեցէք։ Ի հարկէ երկու օրից իրերի գրութիւնը ստիպեց կրկին հաղորդել, թէ Պորտ–Արտուրը կտրւած է ընդհանուր գծից։

Իսկ ընդհանուր պարտութիւնները ծածկելու ու քողարկելու համար, ահա թէ ինչ օրօր են կարդում։ «Մենք եապոնացիներին երկրի խորքն ենք գրաւում, որ յետոյ զորս դու պատիրեցեր, լաւ, ջարդենք։ Այդպէս մենք 1812 թ. Նապալիոնին բշեցինք։» Միթաղելի չէ՞, որ մօտ 100 տարի առաջ զորած դրած պատահական տակտիկայով ուզում են յաղթութիւն տանել ներկայ 20–դդ դարում։ Միամիտ կառավարութիւնը մոռանում է, որ Նապալէօնի արշաւանքը ուրիշ բնաւորութիւն ունէր. նա ամբողջ Եւրոպան և թշնամական պետութիւններ ու ազգաբնակութիւններ էր թողել իր ետև, իսկ եապոնացիք, որքան էլ խորը գընան, Մանջուրիայից դէնը չեն գնալ։ Նրանք պատերազմից առաջ դեռ այդ յայտարարեցին։ Բացի դրանից, Եապոնիան իր ետև ունի իր զօրքը, իր բարեկամ ազգաբնակութիւնը՝ չինացիները, կորէացիները, նոյն իսկ Սիբիրի ռուս աքսորականները ներկայումս բարեկամական խոր զգացմունք են տածում դէպի փոքրիկ Եապոնիան։ Այդպէս մտածել, ինչպէս ցարն է մտածում, դա ո՛չ այլ ինչ է, եթէ ոչ մեծամտութեան նշան։ Եապոնիան լաւ գիտէ երկրի խորքը գնալու վտանգը։ Նա այդ նախատեսելով՝ զօրքը ոչ թէ քշում է մի գծով, ինչպէս նապալէօնը, այլ երեք, գուցէ քիչ ժամանակից յետոյ դարձեալ մի քանի գծից կքշէ և մեր խելօք կառավարութեան կխեղդէ, ինչպէս մի երկաթեայ օղակի մէջ։

Բարեբախտաբար այդպէս են նայում իրերի ներկայ դրութեան և կառավարութեան բռնած ուղղութեան վրայ մեզանում ազգաբնակութեան բոլոր լուսամիտ մարտածողները։ Զանազանութիւններ միայն զոյների մէջ կարելի է նկատել, որից ի հարկէ փաստը երբէք չէ տուժում։ Ժանիք

ԲԱԳՈՒ, 2 մայիսի 1904

Թողնելով մէկ ուրիշ անգամի կամ մէկ ուրիշին՝ նկարագրել թէ ինչպէս կատարւեց Մաքիսեան բանւորական տօնը Բագուի բայոնում, — մենք ստիպւած ենք կանգ առնել մէկ յաւելի խրոխտութեան վրայ, որը տեղի ունեցաւ ամսոյս 1–ին Բիբի–Հէյբաթ կոչւած արուարձանում։

Այն ժամանակ, երբ մէկ խումբ անվախ բանւորներ սկսեցին ժրաջանութեամբ կանգնել նաւթահանքերը՝ իրենց յետից քարշ տալով բոլոր ազգերից բաղկացած հարիւրաւոր գործաթողներին. երբ այդ բազմութիւնից մէկ խումբ բանւորներ չկուելով մօտեցան «Շիբաեվ և ընկ.» նաւթահանքին ու ստիպեցին այդտեղ էլ աշխատանքները դադարեցնել, — դրա կառավարիչ Լեոն Միրոնովիչ Ալաչալեանը սկսեց բանւորներին ընդդիմանալ, և երբ այդ բանը ապարդիւն անցաւ, այն ժամանակ ըսանձնեց նա մաՏՏիչի և ժանդարմի զզւելի դերը՝ փորձելով ձերբակալել տալ բանւորներից մէկին։ Իր այդ կեղտոտ միտքը չկարողանալով իկատար ածել, դաշնակցած նա հարեւան նաւթահանքի կառավարչի (дурновъ) հետ, յորդորեց մշակներին (որոնք վարձած էին 1—4 օրեայ համար միայն) բահերով զինւած արձակւել գլխաւորապէս «խառնակիչ» հայ բանւորների վրայ և նրանց ծեծել։ Ըմբռնելով այդ ընդհարման խիստ վնասակարութիւնը սոցիալիստական աշխատանքի անսայթաք առաջադիմութեան համար՝ գիտակից բանւորները ամեն միջոց գործ դրին դրա առաջն առնելու։ Բայց և այնպէս մի քանի բանւորներ հարւածներ ստացան, որոնցից երկուսը ծանր վիրաւորւած հիւանդանոցումն են։ Ապա այդ լուրը Ալաչալեանը ըսկըսում է տարածել «խառնակիչ» բանւորների անունները՝ դրանով լաւ ծառայութիւն մատուցանելով ոստիկանութեան ու ժանդարմերիային։

Ընթերցող, ցաւալի է արդարև մէկին տեսնել մատնիչի դերի մէջ։ Աւելի ևս ցաւալի է՝ երբ այդ դերը անպաշտօն կերխով կատարում է մէկը, որը համալսարանական կրթութիւն է ստացել և որի դերը հասարակական գործունէութեան ասպարէզում դրա տրամագծօրէն հակառակը պէտք է լինէր։

Ա՜հ «պարոն կառավարիչ», շատ էք առաջ գնում ձեր տխուր դերի մէջ. ամաչեցէք, ամո՞թ է վերջապէս։ Ասենք ամայերու և կարմրելու ընդունակութիւնից բոլորովին զուրկ էք, բայց ձեզ համար պատի՞ւ է սրան–ներան մատնելը... Ի՞նչ, քի՞չ էիք պատապարտելի, քի՛չ պարտաւոր կողմեր ունէիք, քի՛չ վնասներ էք հասցրել հասարակական գործին ձեր կատարեալ անտարբերութեամբ և փողոցային տգայամտական բամբասանքներով վերջինիս մէջ դաշնակից ունենալով Բախշի–բէկ Իւզբաշեանին։

Նայեցէք։ Ձեր շուրջը, ձեր աչքերի առաջ, ձեր «ձեռքի տակ» մէկ ամբողջ բազմութիւն է աշխատում։ Ի՞նչ է նրա գրութիւնը, նրա կեանքը. որո՞նք են նրան այդ օրին հասցնողները. ի՞նչ կայ նրանում թաղնւած. ի՞նչ դեր է ընկած նրա վրայ և նա ինչե՞ր կարող է անել։ Դա հասարակական ներկայ կեանքի պատկերն է, անարդարութեան, աշխարհ հարստահարութեան և ծայրայեղ անհաւասարութեան պատկերը։ Այդ կեանքը ծնունդ է տւել բանւորական շարժման, եղափոխական գործի, որը առաջ են մղում նրա զինւորները՝ հոգեկան և ֆիզիքական տանջանքների, նեղութիւնների ու հալածանքների յաղթելով։

Ի՞նչ է ձեր և ձեր նմանների դիրքը դրա վերաբերմամբ։ — Կուրութիւն, անտարբերութիւն, արհամարհանք դէպի «ցեղատոտ բանւորները» և կոյր ինքնաբաւականութիւն, ինքնահաւանութիւն։ Այդ ձեր տխուր դերակատարութիւնը դեռ բաւական չէ։ Միացած կապիտալիստների հետ՝ դուք ամեն ջանք, ամեն աշխատանք գործ էք դնում ծառայողներին, բանւորներին նեղել, ճնշել, վատ պայմանների մէջ պահել և ըստ կարելւոյն հարստահարել կրկին և կրկին՝ միակ հոգս ունենալով միայն ձեր վայելուչ բայց և անմիտ, դատարկ կեանքի անմիտ ապահովութիւնը, շաղ պաշտօնը ամրապնդելը և հարստանալու խելակորոյս ու անյագ տենչանքը, ձեր միակ իդէալը։

Բաւական չէ, ասում ենք, որ դուք ձեր հասարակական պարտականութիւնը բոլորովին չէք կատարում և ընկել էք մէկ զզվելի կեանքի մէջ՝ լի ամեն տեսակ արատներով և մոռանալով ամեն մէկ սրբութիւն ու յարգանք դէպի բանւորական ազատարար շարժումը։ Դուք դրան խանգարանք էք հանդիսանում և... յանդգնում էք ստորաբար մատնել այդ շարժումը իրենց ուսերի վրայ անվհատ, հազար ու մի զրկանքներով տանող բանւորներին։ Ամօթ և նախատինք ձեզ, «պարոն կառավարիչ», դուք մատնիչի անուն էք վաստակել արդէն և անմահացել։

Զգաստացէք, ուշքի եկէք թէ ի՞նչ էք անում, ի՞նչ կեղտոտ պաշտօն էք ստանձնել։ Եւ ողորմելի թղուկ, կարծում էիք թէ անպատի՞ժ կը մնայիք ձեր ստոր վարմունքի համար։ Այնքան էլ ներողամիտ չեն բանւորներն ու նրանց զեկավարները, նրանք գիտեն ապտակել։ Թող այս առաջին ապտակը, — մեր պատիժը ձեզ, — այս սուղ և թանկագին ժամերում պատիւ լինի ձեզ համար, և սրանից յետոյ թերևս յաճախ արժանանաք այդ պատուին՝ եթէ շարունակէք ձեր կեղտոտ արհեստը։ Ահրիման

Отговорникъ: Степанъ Г. Степанянъ

Търг. печат. и лит. Меркуръ—Русе.